ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի նոյեմբերի 27-30-ը Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Նարեկ Հայրապետյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

3. Գործուղման վայրը / ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, 2019 թվականի նոյեմբերի 27-30-ը

4. Հրավիրող կողմը

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցների վարչության տնօրենի տեղակալ Վլադիմիր Սուբբոտին:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր՝ քննարկել Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներում փոփոխություններ կատարելու հարցերը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանին անասնաբուժական հսկողության (վերահսողության) իրականացման ժամանակ ռիսկ-կողմնորոշիչ մոտեցման կիրառման հնարավորության և մի շարք այլ հարցեր, Եվրասիական տնտեսական միության հարթակում բարձրաձայնել Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը՝ վերոնշյալ, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ, հանդիպել տարբեր երկրների ոլորտային պատասխանատու ներկայացուցիչների հետ և բազմակողմանի քննարկումների արդյունքում ձեռք բերել պայմանավորվածություններ՝ ինչպես չլուծված խնդիրների շուրջ, այնպես էլ հետագա համագործակցության վերաբերյալ:

6. Քննարկված թեմաները

ա/ Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներում անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին՝ «պանրանման արտադրանքի» ներկայացվող անասնաբուժական պահանջների և անասնաբուժական միջոցների սահմանման, ինչպես նաև լիզինին ներկայացվող անասնաբուժական միջոցների մասով փոփոխություններ կատարելու մասին:

բ/ Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներին առնչվող գլխի նախագծի վերաբերյալ, որը սահմանում է մեղրատու մեղուների, բզեզների, ծղրիդների և այլ միջատների նկատմամբ ներկայացվող անասնաբուժական պահանջներ:

գ/ Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջների վերաբերյալ գլխի նախագծի մասին, որը սահմանում է կենդանական ծագման կամ կենդանական ծագում ունեցող բաղադրիչներ պարունակող պարարտանյութերին ներկայացվող պահանջներ:

դ/ Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներում Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (OIE) ցամաքային կենդանիների առողջության մասին օրենսգրքի դրույթներին համապատասխանեցնելու մասով փոփոխություններ կատարելու մասին:

ե/ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում և Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանին անասնաբուժական հսկողության (վերահսողության) իրականացման միասնական կարգի մասին դրույթներում փոփոխություններ կատարելու նախագծի վերաբերյալ, մասնավորապես՝ անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս ռիսկ-կողմնորոշիչ մոտեցման կիրառման նորմերի ամրագրման վերաբերյալ:

զ/ Անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ցանկի նախապատրաստման ընթացքի մասին, որոնք տարբերվում են Եվրասիական տնտեսական միության տարածք ներմուծվող արտադրանքի անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձևերից, որոնց ուղեկցությամբ հնարավոր է հսկողության վերցված ապրանքների ներմուծումը 2013 թվականի հունվարի 1-ից հետո:

է/ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների անասնաբուժության բնագավառի լիազոր մարմինների կողմից՝ երրորդ երկրի

տարածքների /տարածքների որոշ մասերի/ ռեգիոնալիզացիայի արդյունքների ճանաչման կարգի նախագծի վերաբերյալ. Ռեգիոնալիզացիան իրականացվում է տվյալ երրորդ երկրի իրավասու մարմնի կամ Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության կողմից:

ը/ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի մասին:

թ/ Խոշոր եղջերավոր կենդանիների սպունգանման էնցեֆալոպատիայի հետ կապված ներմուծման պայմանների փոփոխությունների մասին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Տեղի է ունեցել հանդիպում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների «Անասնաբուժասանիտարական միջոցառումներ» աշխատանքային խմբի կազմում ընդգրկված ներկայացուցիչների, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների անասնաբուժության բնագավառում լիազոր մարմինների ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման հիմնական նպատակին համապատասխան՝ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ «Անասնաբուժասանիտարական միջոցառումներ» աշխատանքային խմբի հանդիպումները հաճախակի կազմակերպելու վերաբերյալ՝ ինչպես տեսահամաժողովի, այնպես էլ անձամբ մասնակցելու ձևաչափով:

9. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Օրակարգի վերաբերյալ մասնակից պետությունների ներկայացուցիչների կողմից եղել են առաջարկներ և սահմանվել են ժամկետներ՝ դրանց վերաբերյալ մասնակից երկրների դիրքորոշումները ներկայացնելու համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

4.12.2019 թ.